ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

ՍԲ. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

(Հիմնադրման 90-ամեակի առթիւ)

Որեւէ ազգի կամ ժողովրդի մտաւոր առաջադիմութեան երեք ազդակներն են դպրոցը, տպարանը եւ հրապարակագրութիւնը։ Դպրոցը դաստիարակում եւ կրթում է մատաղ սերնդին, տպարանն ապահովում է նրա մտաւոր կեանքի արտադրութիւնը, իսկ հրապարակագրութիւնը՝ ժողովրդի զարգացման մեծագոյն ազդակը։ Այս ճշմարտութիւնը շատ վաղուց քաջայայտ է մեզ, եւ դպրոցներն ու տպարաններն իրենց կարեւոր եւ արժանի տեղն են գրաւել հայոց կեանքում, իսկ հրապարակագրութիւնն իր երթն սկսել է միայն 18-րդ դարի վերջերից ու տարածուել յաջորդ դարի առաջին կէսին։

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Պատրիարքութեան բազմաճիւղ առաքելութեան մէջ թէ՛ դպրոցը, թէ՛ տպարանը եւ թէ՛ հրապարակագրութիւնը իրենց կարեւոր դերն ունեն։

Արաբ պատմագիր Զաքի ալ-Դինի վկայութեամբ՝ 7-րդ դարում հայերն արդէն Սուրբ Երկրում ունեցել են դպրոցներ. Երուսաղէմի հայ Պատրիարք Աբրահամ Արքեպիսկոպոսին (638-669) Մուհամմադի տուած հրամանագրով, ի թիւս այլ կալուածքների, Հայ Եկեղեցուն են շնորհուել նաեւ հայկական դպրոցները[1]։

1862 թ. նորնախիջեւանցի Կարապետ Շուլտովեանցի նուիրատուութեամբ Սրբոց Յակոբեանց վանքի տարածքում կառուցուել է Երուսաղէմի առաջին օրիորդաց՝ Սրբոց Գայիանեանց վարժարանը, որն ուներ 48քառակուսի մեթր տարածք։ Իսկ արական՝ Մեսրոպեան նախակրթարանը, գտնւում էր Ժառանգաւորաց վարժարանի ճեմարանի ներքնայարկում, նկարչութեան դասընթացների համար նախատեսուած ընդարձակ սրահում։ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի հաւաստմամբ, մանկապարտէզի մանուկների թիւն էր 100, աղջիկների՝ Գայիանեանց նախակրթարանինը՝ 20, իսկ արական՝ Մեսրոպեան նախակրթարանինը՝ 30։

Մեսրոպեան ու Սրբոց Գայիանեանց վարժարանները գործել են Պատրիարքութեան ֆինանսաւորմամբ՝ թեթեւացնելու համար հայ ընտանիքների նիւթական բեռը[2]։

1927 թ.-ին Սուրբ Երկրում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով քանդուել է Սրբոց Գայիանեանց վարժարանի շէնքը։ Խարխլուած շէնքի տեղում վանական իշխանութիւնը որոշում է կառուցել Նախակրթարանի եւ Մանկապարտէզի նոր շէնք։

1928 թ.-ին Եղիշէ Ա. Դուրեան Պատրիարքի նախաձեռնութեամբ Սուրբ Աթոռի ծախսերով սկսւում է հոյակապ եւ արդիական նոր վարժարանի՝ Սրբոց Թարգ-

---

[1] **Սաալանեանց Տ.,** Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ, 2000, էջ 261։

[2] Տե՛ս **Բաղդասարեան Կորիւն Վարդապետ,** Երուսաղէմի հայկական թաղամասի գաղտնիքները, Մաս Ա, Երեւան, 2019, էջ 17։

մանչացի կառուցումը։ Դժուարին պայմաններում հիմնուած ուսումնական հաստատութիւնն իր հիւրընկալ դռները բացում է 1929 թ.-ին, Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեանի վերատեսչութեամբ, մօտ 250 աշակերտներով, մանկապարտէզի չորս, եւ նախակրթարանի չորս դասարաններով։

Բացումից մէկ տարի անց վարժարանի տեսչութիւնը յանձնւում է Կիւրեղ Վարդապետ Իսրայէլեանին, ով այդ շրջանում երիտասարդ վարդապետութեան ամենաաչքառու ուժն էր՝ օժտուած եւրոպական բարձրագոյն կրթութեամբ եւ թրծուած Կալկաթայի, Եգիպտոսի եւ Երուսաղէմի վարժարաններում՝ 15 տարիների տեսչական եւ ուսուցչական փորձառութեամբ։

Այդ օրերին, Սրբոց Թարգմանչաց վարժարանը գտնւում էր կրթական նոր պահանջների առջեւ։ Պաղեստինի բրիտանական հոգատարութիւնը կերպարանափոխել էր երկրի կրթական դրութիւնը եւրոպական դաստիարակութեան առաւելութիւններով։ Հետեւաբար, որպէսզի Թարգմանչացը կարողանար լաւագոյնս օգտակար լինել իր աշակերտներին, անհրաժեշտ էր հաղորդ լինել այդ նորութիւններին, ու այդպիսով Թարգմանչացի շրջանաւարտ հայորդին առանց ընկրկումի կը կարողանար շարունակել իր ուսումնական ընթացքը օտար բարձրագոյն վարժարաններում։

1932 թ.-ին Սրբոց Թարգմանչաց վարժարանը տալիս է իր շրջանաւարտների առաջին երկսեռ հունձքը, որոնք յաջողութեամբ կարողացան շարունակել իրենց ուսումը Երուսաղէմի օտար երկրորդական վարժարաններում։

Իր գոյութեան ընթացքում վարժարանը տուել է 1600-ից աւելի շրջանաւարտ։ Աշակերտների թիւը վայրիվերումներ է ունեցել. 1943 թ.-ի արաբ-իսրայէլեան պատերազմից առաջ Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտների թիւը բարձրացել է մինչեւ 750-ի, իսկ 1975 թ.-ին ընդամէնը 4 աշակերտ ունէր։ Ամենաշատ շրջանաւարտները տուել է 1949 թ.-ին՝ 50 հոգի։

Վարժարանն այժմ ունի 163 աշակերտ։

1953 թ.-ին Սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսումնական ծրագիրը նախակրթարանի մակարդակից բարձրացել է Երկրորդական բարձրագոյն ուսումնառութեան։ Կրթական այս երեք բաժանումներից բացի, Սրբոց Թարգմանչաց վարժարանն ունեցել է սկաուտական խմբեր։ Արիների եւ Գայլիկների խմբերը կազմուել են վարժարանի հաստատման առաջին տարիներից ի վեր։ Իսկ 1953 թ.-ին կազմուել են նաեւ Արենուշների եւ Արծուիկների խմբերը։ Վարժարանի սենեակներից մէկը յատկացուել է Սրբոց Թարգմանչաց Շրջանաւարտից Միութեանը, որը 1933 թ.-ին կազմուել էր իբրեւ Սանուհեաց Միութիւն, իսկ 1943 թ.-ին ընդունելով երկսեռ անդամագրութիւն՝ կոչուեց Սրբոց Թարգմանչաց Շրջանաւարտից Միութիւն։

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական վարժարանի շրջանաւարտները, որոնք տարբեր երկրներում շարունակելով իրենց ուսումը ստացել են բարձրագոյն կրթութիւն, այսօր ճանաչելի են դարձել ոչ միայն Սուրբ Երկրում, այլեւ օտար ափերում, գիտութեան, մշակոյթի ամենատարբեր ոլորտներում։ Նրանցից Հայ Երուսաղէմին պատիւ բերող շատ հայորդիներ այսօր բժիշկներ, ճարտարապետներ ու ճարտարագէտներ, առեւտրականներ, գիտնականներ, ուսուցիչներ, երաժիշտներ, հիւպատոսներ, դասախօսներ եւ այլ մասնագէտներ են։ Նրանց դասախօսները եղել են ե՛ւ հոգեւորականներ, ե՛ւ աշխարհականներ, վերջիններիս թուում՝ անուանի երաժիշտ Օհան Դուրեանը։

Վարժարանում տարբեր առիթներով դասախօսութիւններ են կարդացել յայտնի գրաքննադատ Յակոբ Օշականը, երաժշտագէտ Շահան Պէրպէրեանը, բանաստեղծ

Վահան Թէքեյեանը, Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանը եւ ուրիշներ։

Այսօր, Սաղիմահայութեան մէջ հայ դպրութիւնը, հայ ազգային բազմադարեան պատմութիւնն ու մշակոյթը դարբնող Սրբոց Թարգմնաչաց վարժարանն ունի ինը տասնամեակների պատկառելի պատմութիւն։ Այն իր 90 տարիների հունձքով, կրթական ծրագրերի եւ ուսուցման պատկառելի աւանդութիւն է ստեղծել Երուսաղէմի հայ իրականութեան մէջ եւ շարունակում է մնալ ազգային պանծալի այն հաստատութիւնը, որ կրօնական եւ բարոյական խորքի մէջ հայ պատանիներին թրծում է ազգային շնչով, նրանց մէջ կերտում ազնիւ նկարագիր՝ դարձնելով նրանց բարեկիրթ ու ճշմարիտ հայ։

Պէտք է արձանագրել, որ Երուսաղէմի Առաքելահիմն Սուրբ Աթոռը հիմնել, մըշտապէս սատարել, հովանաւորել, ընթացք է տուել Սաղիմահայ գաղութի միակ երկսեռ ուսումնական հաստատութեան գործունէութեանը։ Սրբոց Թարգմանչաց վարժարանի համար Սրբոց Յակոբեանց միաբանութիւնն անասելի դժուարութիւններ յաղթահարելով կարողացել է եւ շարունակում է պահել, ապահովել վարժարանի կենսագործունէութիւնը։ Միաբանութիւնը միշտ ժամանակ է գտել եռանդով ու մեծ նուիրումով իր նպաստը բերելու հայկական Երուսաղէմի կրթական գործի կազմակերպմանն ու առաջընթացին։

Սրբոց Թարգմանչաց վարժարանը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան լուսաւորութեան ջահը կազմող կայծերից մէկն է, որի մէջ վառվում եւ բորբոքւում է հայի վեհ նկարագիրն ու հոգին։ Այն ոգի եւ կորով է ներշնչում աշակերտների մէջ, ազգային եւ եկեղեցական պատմութեան, լեզուների եւ միւս բոլոր նիւթերի ուսուցմամբ։

Վարժարանի անցած բեղմնաւոր ճանապարհն այսօր էլ մեզ պատգամում է արդիական պահանջների հետ միշտ պահել հայեցի նկարագիրը, տէր ու պաշտպան լինել հայոց ժառանգութեանն ու ուսուցանել մայրենի լեզուն, գիրն ու գրականութիւնը։